ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ...«ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԹՈՒՄԱՆՅԱՆ-ԳՐԻՇԱՇՎԻԼԻ ԲԱՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ»

*Այն, որ հայ-վրացական բարեկամությունը դարերի պատմություն ունի, գաղտնիք չէ: Ինչպես եւ այն, որ այդ բարեկամության ստեղծողը, ամրապնդողն ու շարունակողը անհատներ են՝ այս կամ այն ոլորտի գաղափարակիցներ, գործընկերներ եւ կամ ուղղակի ընկեր ու հարեւաններ, ում ջերմ ու գործնական կապը, գիտակցաբար թե ենթագիտակցաբար, հարգել ու սիրել է տալիս նաեւ միմյանց ազգն ու ժողովուրդը: Մեր՝ հայերիս ու վրացիների պատմության մեջ նման մեծ կամուրջներից էին Թումանյանն ու Գրիշաշվիլին, ում գործնական ու եղբայրական կապն առայսօր իր մասին ոչ միայն խոսելու, այլեւ ընդօրինակելու անհրաժեշտություն ունի: Այդուհանդերձ, ժամանակներն ու նրանցում ապրող սերունդները մշտապես կարիք ունեն նոր անհատների, որոնք նոր կամուրջներ կգցեն՝ բացառելով յուրաքանչյուր թյուրըմբռնում ու երրորդ ուժի չարակամ միջամտություն:*



Լեւան Ցալուղելաշվիլուն Թբիլիսիի հայ համայնքում թերեւս շատերը գիտեն: Մեր միջոցառումն առատ առօրյայի ոչ միայն պարտադիր հանդիսատեսն է, այլեւ մասնակիցն ու կազմակերպիչը: Նրան վիրահայ իրականություն բերեց մեր օրերի անփոխարինելի կամուրջը՝ Անահիտ Բոստանջյանը, ով Լեւանիի հետ ծանոթացել էր Վրաստանի գրողների միության տանը եւ՝ նրա մեջ տեսել հենց այն վրացի երիտասարդին, ով այսօր հայ ու վրաց բարեկամության նոր կամուրջներ է գցում՝ ամեն քայլափոխի հպարտանալով իր ցանկությամբ ու պատրաստակամությամբ:

Մի քանի օր է, Լեւանը վերադարձել է Երեւանից: Մասնակցում էր Հյուսիսային համալսարանի «Թումանյան-150» գիտաժողովին, ուր հանդես եկավ Ամենայն Հայոց բանաստեղծին նվիրված զեկույցով: Հանդիպեցինք ու խոսեցինք Երեւան իր այցի ու նաեւ հայերի հետ կապող սիրո ու պատասխանատվության մասին:

***- Լեւան, սովորաբար Թբիլիսիում ապրող վրացին է առավել ճանաչում հային, որովհետեւ, ինչպես էլ լինի, մի հայ հարեւան կունենա...***

- Նման «հարեւանն» իմ Ամալյա տատիկն էր, հորս հայ մայրը, - ասում է Լեւանը: - Ես միշտ հիշում եմ նրան... եւ այն, որ երջանիկ երեխա եմ եղել, հենց Ամալյա տատիկի շնորհին է: Թբիլիսիից արեւմուտք ընկած հրաշագեղ Թիանեթիից ենք: Այդտեղ ծնվել ու մեծացել եմ: Մայրաքաղաք տեղափոխվել եմ՝ ընդունվելով Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի միջազգային հարաբերությունների եւ իրավագիտության ֆակուլտետ: Հայերի հետ փաստորեն ինձ իմ թանկագին Ամալյա տատիկն է կապել, ում հանդեպ կարոտը ես առնում եմ հայերի հետ շփմամբ:

***- Որտեղի՞ց էր Ամալյա տատիկը:***

- Թբիլիսիից, Հավլաբար թաղամասից: Թեեւ այնքան էր սիրում «Ղարաբաղցի նախշուն բաջի» երգը, որ կարծում եմ, նախնիները ծագումով Արցախից էին: Տատիկս բացառապես վրացերեն էր խոսում, այդպիսին էր մեր ընտանիքի դրվածքը: Բայց երբեք չէր ուրանում իր ազգային ծագումը, քթի տակ անընդհատ մրմնջում էր... Փոքր հասակում այդքան չէի հասկանում եւ, եթե տատիկս այսօր ողջ լիներ, շատ բան կհարցնեի... ցավոք, հայերի մասին նրա մահից հետո եմ կարդացել:

***- Միջազգային հարաբերություններ, իրավագիտություն ու... գրականություն, ընդհուպ՝ Վրաստանի գրողների միության անդամ: Ո՞ր ճյուղն է այսօր գերիշխում: Որքանո՞վ ես ծանոթ հայ գրականությանը:***

- Այս պահին՝ իրավագիտությունը: Բայց ուսանողական շրջանում աշխատել եմ՝ որպես լրագրող մամուլում եւ հեռուստատեսությունում: Իսկ գրել եմ մանկուց: Հայ գրականությունը ճանաչեցի իմ մեծ ու անփոխարինելի բարեկամին՝ Անահիտ Բոստանջյան բանաստեղծուհուն ու, նրա թարգմանությամբ ժամանակակից հայ գրողներին ծանոթանալով, ապա ուսումնասիրեցի Գիվի Շահնազարի թարգմանությունները՝ արդեն հայ դասականներից: Այժմ ամբողջությամբ տարվել եմ Թումանյանով: Կարծում եմ, վրաց հասարակությունը հավուր պատշաճի պետք է գիտակցի եւ վերլուծի բարեկամության եւ եղբայրության այն հզոր կամրջի նշանակությունը, որի հիմքը դրել է Թումանյանը: Այս մեծ մարդու գործունեության մասին պետք է շատ խոսվի ու գրվի, որպեսզի վրաց հանրությունը ճանաչի ու զգա նրա մեծարժեք առաքելությունն ու Վրաստանի հանդեպ մեծ սերը: Հենց այս մեծ ու կարեւոր գործում եմ ուզում ունենալ իմ համեստ ներդրումը:

***- Հայաստանի հանրային հեռուստաընկերության «Թումանյան-150» նախագծի շրջանակներում, հայերեն ընթերցեցիր Թումանյանի «Սուրբ Նինոյի պատկերի առաջ» բանաստեղծությունը, որ երկար ժամանակ շրջանառվեց համացանցում...***

- Այո եւ ոչ միայն ես, նաեւ Վրաստանի գրողների միության համանախագահ Մաղվալա Գոնաշվիլին, բանաստեղծ Ռեզո Ադամիան... մեր հարգանքի տուրքը մատուցեցինք մեծ գրողին: Իսկ ձայնագրությունը համընկավ ծննդյանս օրվա հետ, որ կրկնապատկեց ոգեւորությունս, քանի որ Թումանյանի երկրպագուն եմ այժմ: Այս միջոցառմանը հետեւեց Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տան» աշխատակցուհու տիկին Գոհար Մազմանյանի առաջարկը՝ հանդես գալ Հովհաննես Թումանյանի կյանքի եւ գործունեության մասին զեկույցով: Ցավում եմ, որ հրավիրածս վրացիներից այդ օրը քչերն էին եկել...

***- Օրեր առաջ Երեւանում էիր, մասնակցում էիր «Թումանյան-150» գիտաժողովին: Ինչպե՞ս անցավ, ինչպիսի՞ն էր Երեւանը քո աչքերով:***

- Հյուսիսային համալսարանի գիտաժողովին Թբիլիսիից մասնակցեցին պրոֆեսոր Էմմա Ախտյանը, Թումանյանի տան աշխատակցուհի Արմենուհի Պողոսյանը: Ուրախությամբ ընդունեցի Թումանյանի տան ղեկավար Գիսանե Հովսեփյանի առաջարկը, քանի որ ինձ վերապահված ելույթով, փաստորեն, ներկայացնելու էի Վրաստանը: Շնորհակալ եմ կազմակերպիչներին եւ, մասնավորապես համալսարանի պրոֆեսոր Սերգո Երիցյանին:

Ավելի վաղ, Երեւանում եղել եմ որպես զբոսաշրջիկ: Այցելել եմ Ծիծեռնակաբերդ, Գառնի-Գեղարդի շքեղ տաճարներ, տեսել եմ կապուտաչ Սեւանն՝ իր չնաշխարհիկ տեսարաններով: Ես Երեւանը շատ եմ սիրում, սա քաղաք է, որտեղ միաժամանակ խոսում են պատմությունն ու ժամանակակից ճարտարապետությունը: Յուրաքանչյուր քայլին զգացվում է տեղացիների բարեհամբույր վերաբերմունքը: Շրջագայությանս տպավորության տակ նույնիսկ բանաստեղծություններ եմ գրել խաչքարի ու Գեղարդի գաթաների, Հայոց ցեղասպանության մասին: Հույս ունեմ, կգա մի օր, երբ կգրեմ հայերեն նույնպես:

***- Սովորո՞ւմ ես:***

- Դեռ վաղ է այդ մասին խոսել, բայց այո, խոսակցականում արդեն փորձում եմ: Նույնիսկ թարգմանում եմ: Մի քանի բանաստեղծություն արդեն թարգմանել եմ ժամանակակից հայ բանաստեղծ Սլավիկ Հարությունյանից (Իսպանիա): Կարծում եմ, հայոց լեզուն նույնքան հետաքրքիր ու բազմերանգ է, որքան հենց ինքը հայ մշակույթը:

***- Լեւան, հաճախ եւ մանավանդ համացանցում ոմանք փորձում են խարխլել թիֆլիսյան բազմաբղետ ազգային կոլորիտը, նաեւ՝ հայերի դեմ անհեթեթ մեկնաբանություններով: Ինչպե՞ս արմատախիլ անել այս բացասական երեւույթն ու միտումը:***

- Վրաստանը բազմազգ երկիր է եւ, չնայած արյանս մեջ եղած հայկական կաթիլների, ես փորձում եմ հարգել բոլորին հավասարապես: Մեր՝ վրացիների, իրական ու իսկական կոչումն է դա: Չէր լինի թիֆլիսյան եզակիությունը, թե չլիներ այդ բազմաբղետությունն ու դրանում հայի մեծարժեք հետքը: Այո, երբեմն երրորդ մեկը փորձում է ճեղք առաջացնել մեր կամրջի վրա, թեեւ՝ ապարդյուն: Այդուհանդերձ, կարծում եմ, այստեղ իր բացասական դերակատարումն է ունենում կամ քաղաքականությունը եւ, ինչ խոսք, մամուլում հայերի եւ վրացիների մասին ոչ օբյեկտիվ հրապարակումները, որ բերում են միմյանց մասին գիտելիքների պակասի:

***- Երեւի պարադոքս է չէ՞, ինֆորմացիայի դարում՝ ինֆորմացիայի պակաս...***

- Հենց դրանում է խնդիրը, ով ինչ ուզում՝ գրում է: Հատուկ քաղաքականություն է հարկավոր, կարծում եմ: Ուստի ուրախությամբ նշեմ, որ երկու տեսանկյունից էլ իրավիճակն այժմ առավել քան բարենպաստ է: Հայաստանի եւ Վրաստանի նոր ղեկավարությունները տեսանելիորեն փոխել են իրենց արտաքին քաղաքականությունը՝ մեր իշխանավորների փոխայցերը, ըստ որում պաշտոնական եւ ընկերական, շատ ավելի հաճախակի են ու թափանցիկ: Եվ կամ օրինակ, հունիսի 4-ին, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 73-րդ նստաշրջանում Աբխազիայից եւ Հարավային Օսեթիայից բռնի տեղահանված անձանց եւ փախստականների կարգավիճակի մասին բանաձեւի քննարկմանը Հայաստանի ձեռնպահ մնալու փաստը... Չեմ կարող չնշել նաեւ Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի ակտիվությունն ու նախաձեռնողական քաղաքականությունը: Վերջերս նրա հարցազրույցներից մեկում կարդացի, որ մի խումբ վրացի երիտասարդներ մեկնելու են Հայաստան եւ հակառակը՝ Հայաստանից Վրաստան են գալու՝ տեղի մշակույթին ու պատմությանը ծանոթանալու նպատակով: Նման փոխայցերն ու հանդիպումները շատ բան կարող են փոխել: Եվ թիրախը պետք է լինի հենց երիտասարդությունը:

***- Եթե առաջնորդվենք Թումանյանով, ապա...***

- ... Նա ասում էր, որ ինչ ուզում է լինի, վրացին էլ, հայն էլ ճերմակ Կավկասիոնիի զավակներն են, որոնց մշակույթը եւ նույնիսկ առանձին լեզվական միավորը՝ ընդհանրություն ունեն: Մենք իրավունք չունենք իրար ուրախացնելու փոխարեն, թշնամուն ուրախացնել: Մենք պետք է լինենք մեր նախնիների ավանդույթների արժանի շարունակողները, այն արժեքավոր ավանդույթների, որոնք բխում են եղբայրական սիրուց: Քանի դեռ ողջ եմ, ուզում եմ հենց այդ մեծ արժեքին հավատարիմ մնալ, այլ կերպ, որպես վրացի, իմ գոյությունը չեմ պատկերացնում:

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***

ԲՈՒՀ

# ԳԵՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՏՐՎՈՒՄ Է ՎՐԱՑԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻՆ

*Դեռեւս խորհրդային տարիներին, սովորության ուժ էր ստացել այն պատկերացումը, որ Վրաստանի հայկական դպրոցների շրջանավարտներն ուսումը կարող էին շարունակել միայն հայաստանյան բուհերում:*

Նորանկախ Վրաստանում տեղ գտած բազում փոփոխությունների հետ միասին, լուրջ տեղաշարժեր սկսվեցին նաեւ մարդկանց մեծամասնության մտածելակերպում: Հավանաբար, դա առաջին հերթին պայմանավորված էր նյութական, կենցաղային, ինչպես նաեւ ապագայում զբաղվածության հարցի, այլ գործոնների հետ: Ինչեւիցե, վերջին տարիներին կտրուկ սկսեց աճել մեր երկրի այն հայ շրջանավարտների թիվը, ովքեր ցանկանում են ուսումը շարունակել վրացական բուհերում: Բնականաբար, դրան մեծապես նպաստեց Վրաստանի հանրային դպրոցներում պետական լեզվի ուսուցման մակարդակի բարձրացումը, կառավարության նախաձեռնած «1+4» ծրագրի լիարժեք կիրարկումը, իրենց ապագան Վրաստանի, հարազատ ծննդավայր շրջանի, գյուղի հետ կապելու ցանկությունը եւ այլն: Հատկանշական է, որ նման միտումը վավերացվել է ոչ միայն մայրաքաղաքի, հայաբնակ շրջկենտրոնների հայկական դպրոցների շրջանավարտների, այլեւ՝ գյուղական դպրոցների աշակերտների շրջանում:

Այդ ուղղությամբ վերջին ուսումնասիրությունները եւս հաստատում են վերջին տարիներին կանխագծված միտումը: Օրինակ, Ախալքալաքիի մունիցիպալիտետում այս ուսումնական տարվա 150 շրջանավարտներից 71-ը, ուսում ստանալու նպատակով, փաստաթղթերը հանձնել են Վրաստանի, ավելի ստույգ Թբիլիսիի տարբեր բուհերում: Շրջանավարտների վերոնշյալ թվից միայն 25-ն է գերադասել ուսումը շարունակել Հայաստանում, իսկ 8-ը՝ Ռուսաստանում: Ինչ վերաբերում է մյուս շրջանավարտներին, ապա, նրանք գերադասել են հմտանալ առանձին մասնագիտությունների ուղղություններով: Օրինակ, Ախալքալաքիում գործող երկաթուղային տրանսպորտային քոլեջի եւ «Մարաբդա-Կարծախ» երկաթուղի ՍՊԸ-ի միջեւ կնքած հուշագրով, տեղի երիտասարդները կարող են անվճար սովորել երկաթուղային ավելի քան 20 մասնագիտություն, ուսման տեւողության բոլոր 20-22 ամիսների ընթացքում, ընկերության հետ պայմանագրով, կարող են միաժամանակ նաեւ աշխատել՝ տեսականորեն եւ գործնականորեն յուրացնելով երկաթուղային տարբեր թեքումների մասնագիտությունները:

Իսկ թբիլիսյան բուհերում սովորելու փաստը, ինչպես մեզ հետ զրույցում ընդգծեցին, թույլ կտա անմիջականորեն տեղում, հարազատ վայրերում կարգավորել ամենահրատապ հիմնախնդիրներից մեկը՝ զբաղվածության հարցը, միաժամանակ, օգտավետ լինել հարազատ շրջանին, գյուղին...

***ԱՄԱԼՅԱ ԲԱԲԱՅԱՆ***
***jnews-ի թղթակից***
***ք.Ախալքալաքի***

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՔԱ՞Ն ԵՆ ԿԱԶՄՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ



***Վերջերս շատ են խոսում պետական բյուջեից գաղտնի, ռազմական նպատակներով հատկացումների մասին: Հետաքրքիր է իմանալ, առանց գաղտնի հոդվածների, ո՞ր երկրները որքան են ծախսում ռազմական նպատակներով, եւ որքանով են այդ ծախսերը մատչելի հանրության համար:***

***Բ.Նիկողոսյան***

***Թբիլիսի***

Միանգամից նշենք, որ շատ քիչ է այն երկրների թիվը, որոնք գերադասում են քողարկել ռազմական ոլորտի ծախսերը, քանզի փոխկապակցված աշխարհում դա գրեթե անհնար է իրականացնել: Ինչ վերաբերում է առանձին երկրների ռազմական ծախսերին, ապա Ստոկհոլմի Խաղաղության խնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտի՝ SIPRI-ի ռազմական ծախսերի համաշխարհային վարկանիշային ցուցակում 649 մլրդ դոլարով առաջին տեղը վերապահվում է ԱՄՆ-ին: Երկրորդ տեղում Չինաստանն է՝ 250 մլրդ դոլարով, երրորդում՝ 67,6 մլրդ դոլարով Սաուդյան Արաբիան:

Այսպիսով, աշխարհում ամենաբարձր ռազմական ծախսերով թոփ 10 երկրներն են՝

SIPRI -ի Թոփ 10 (Ռազմական ծախսերը ՀՆԱ-ի համեմատ)

1. ԱՄՆ - 649 մլրդ (դոլար) - ՀՆԱ- 3.2%
2. Չինաստան - 250 մլրդ - ՀՆԱ- 1.9%
3. Սաուդյան Արաբիա - 67.6 մլրդ - ՀՆԱ- 8.8%
4. Հնդկաստան - 66.5 մլրդ - ՀՆԱ- 2.4%
5. Ֆրանսիա - 63.8 մլրդ - ՀՆԱ- 2.3%
6. Ռուսաստան - 61.4 մլրդ - ՀՆԱ- 3.9%
7. Մեծ Բրիտանիա - 50 մլրդ - ՀՆԱ- 1.8%
8. Գերմանիա - 49.5 մլրդ - ՀՆԱ- 1.2%
9. Ճապոնիա - 46,6 մլրդ - ՀՆԱ- 0.9%
10. Հարավային Կորեա - 43.1 մլրդ - ՀՆԱ- 2.6%

Ստոկհոլմի Խաղաղության ինստիտուտը ուսումնասիրել է աշխարհի 40 երկրների ռազմական ծախսերը: Վրաստանը եւ Հայաստանը այս վարկանիշում չկան: ԱՊՀ երկրներից միայն Ուկրաինան է, 4.8 մլրդ դոլարով զբաղեցնում է 39-րդ հորիզոնականը:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՆՊԱՍՏԵՆ ՆԻՀԱՐԵԼՈՒՆ



***Որքանո՞վ է պարտադիր, լրացուցիչ քաշից ազատվելու համար, դիետայի պահպանումը, մի՞թե նիհարելու համար այլ ուղիներ չկան:***

***Մ.Սարգսյան***

***Նինոծմինդա***

Որքան էլ տարօրինակ լինի, ավելորդ կիլոգրամներից ազատվելու համար դիետա պահելը եւ կյանքն արմատապես փոխելը պարտադիր չէ: Կարելի է պարզապես հրաժարվել փոքրիկ, բայց վնասակար այնպիսի սովորություններից, որոնք նպաստում են անցանկալի կիլոգրամների ավելացմանը: Այդպիսի սովորություններից մեկը պահածոներ պատրաստելն է: Պահածոյացրած բանջարեղենը փորձեք փոխարինել սառեցրած բանջարեղենով: Պահածոների մեջ օգտագործվում են համն ուժեղացնող եւ քաղցրացնող հավելումներ: Նույնիսկ, եթե մթերքն էկոլոգիապես մաքուր է, միեւնույն է, պահածոյացնելիս բավականաչափ աղ եւ շաքար է օգտագործվում: Սառեցրած բանջարեղենն ու միրգը պահպանում են օգտակար հատկությունները, չեն պարունակում ավելորդ հավելումներ:

Քաղցրավենիքի փոխարեն պետք է օգտագործել չրեր եւ ընկուզեղեն: Թխվածքաբլիթները, տորթերը եւ կոնֆետները փոխարինեք չրերով, մարմելադով եւ զեֆիրով: Այդ դեպքում կնիհարեք, առանց քաղցրից հրաժարվելու:

Սակայն երբեք չի կարելի մոռանալ չաղանալու մասին:

Մոռացեք մայոնեզի եւ յուղալի թթվասերի մասին: Դրանց փոխարեն աղցաններին կարելի է ավելացնել մածուն կամ հունական յոգուրտ:

Խմեք սեւ սուրճ, այլ ոչ թե սրճային ըմպելիքներ: Միայն ջրով պատրաստված սուրճն ընդհանրապես կալորիաներ չի պարունակում: Իսկ սերուցքով, կաթով եւ շաքարով պատրաստված սուրճը բավական հարուստ է կալորիաներով:

Եթե ընկերների կամ բարեկամների հետ նախատեսված ճաշկերույթ կա, որի դեպքում ավելորդ 1000 կալորիան հաստատ ապահովված է, մինչ այդ մի քիչ աղցան կերեք: Այդպիսի «խորամանկությունը» կօգնի երեկոյի ընթացքում ավելի քիչ ուտել:

Տորթ թխելիս՝ ձեռքի տակ բանան, տանձ կամ խնձոր պահեք: Գիտնականները վստահեցնում են, որ այս մրգերի բույրն ախորժակը կանխող հատկություն ունի եւ օգնում է ձերբազատվել քաղցրավենիքի հանդեպ ունեցած թուլությունից:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ

# ՀԱՄԱՑԱՆՑՆ ՈՒ ԵՐԵԽԱՅԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

***Մանկական հոգեբաններն ու հոգեբույժները գտնում են, որ 21-րդ դարում երեխաների հիմնական հիվանդությունների պատճառը հեռուստացույցն ու համացանցն է: Երեխայի վրա համացանցի բացասական ազդեցության խնդիրը հայտնվել է մանկավարժների, հոգեբանների, ծնողների ուշադրության կենտրոնում: Այդ բացասական հետեւանքները կարող են արտահայտվել թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջության վրա: Ելնելով խնդրի հրատապությունից, մենք հարցեր ուղղեցինք Մանկական առողջապահության կենտրոնին: Ստորեւ ներկայացնում ենք կենտրոնից ստացված պատասխանները.***

**Ինչպե՞ս կարող է ազդել համացանցը երեխաների հոգեկան առողջության վրա:**

Համակարգչի եւ համացանցի ազդեցությունը երեխաների հոգեկանի վրա անհրաժեշտ է գնահատել 2 տեսանկյունից՝ դրական եւ բացասական: Ժամանակակից կյանքում անգամ նախադպրոցական տարիքի երեխաների համար այն կյանքի անբաժանելի մասն է: Երեխան աշխարհը ճանաչում է համակարգչի միջոցով. խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ եւ այլն: Համացանցը օգտակար եւ անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր է: Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի, ինչո՞ւների պատասխանները կարող են



գտնվել համացանցում: Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ: Միաժամանակ, համակարգչի եւ համացանցի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա բացասական հետեւանքներ կարող է ունենալ: Նախ համակարգչի առջեւ շատ ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ ընդհանուր թուլություն եւ հոգնածություն է դրսեւորվում, քնի խանգարումներ: Բացասական հետեւանքները կարող են իրենց հետքը թողնել հոգեկան գործընթացների վրա (մասնավորապես՝ երեխայի հիշողության վատթարացում, դպրոցում դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնանում, հասկանում ու դատողություններ անում), հոգեվիճակների, անձնային հատկությունների ձեւավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում: Առավել շատ են հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձեւավորման բացասական միտումները՝ կապված տեղեկատվության ներգործության հետ:

Կարելի է ասել, որ համացանցն ազդում է երեխայի աշխարհայացքի ձեւավորման վրա:

Ինֆորմացիայի աշխարհն իր բոլոր դրսեւորումներով ազդում է մարդու արժեքային համակարգի, արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների, նպատակների ու ցանկությունների, երազանքների ու իդեալների ձեւավորման, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա:

**Ո՞ր տեսակի նյութերը կամ կայքերն են առավել վտանգավոր երեխաների համար:**

Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Համացանցը լի է անորակ, թյուր ինֆորմացիաներով, էրոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակների: Չի բացառվում, որ երեխաները եւս նմանօրինակ ինֆորմացիաի հանդիպեն: Նախադպրոցական տարիքը, առավել եւս դեռահասության շրջանը սեռային ինքնագիտակցության, սեռական նույնականության ձեւավորման, սեռային դերերի ու բնութագրերի յուրացման կարեւոր շրջաններն են: Սեռերին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկատվության եւ տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների անարգելք ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումները, բացասաբար ազդել սեռական հասունացման ընթացքի վրա, բացասական հետեւանքներ ունենալ տարիքին բնութագրական տվյալ ոլորտի նկատմամբ դրսեւորվող գերուշադրության ու հետաքրքրության վրա, ընդհանրապես չձեւավորված սեռական, սոցիալական, հոգեկան ոլորտների զարգացման ընթացքների վրա: Դեռահասների, պատանիների ու երիտասարդների մոտ կախվածություններ են առաջանում սոցիալական ցանցերից, որոնք դարձել են հաղորդակցման այլընտրանքային ձեւեր, ծանոթության եւ շփման հասանելի միջոցներ:

*(Շարունակելի)*

# ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



❑ *Խելամիտն իրավիճակը գնահատում է իր սեփական դատողության համաձայն, հիմարը՝ վստահում է հանրության ասածին:*

❑ *Նեղվածությունը գրեք ավազի վրա, իսկ բարի գործերը փորագրեք մարմարին:*

❑ *Աստիճանի վերին հարթակին բարձրանալու ամենաբարդ բանը նրա ստորին հատվածի ամբոխը ճեղքելն է:*

❑ *Հիմարը դատարկ բանից մեծ աղմուկ է բարձրացնում, իսկ խելոքն անգամ մեծ գործեր նախաձեռնելիս հանգստություն է պահպանում:*

❑ *Մենք ի վիճակի չենք փոփոխել մեր կյանքի տեւողությունը, բայց մենք կարող ենք ինչ-որ բան անել նրա լայնության ու խորության վերաբերյալ:*

❑ *Երջանկության ձեր առաջնահերթությունները դուք պետք է ընտրեք՝ անկեղծ լինելով ինքներդ ձեզ հետ: Մի՛ ձգտեք այն շաբլոններին, որոնց ուրիշներն են հասել:*

❑ *Երջանկության ձեր տարբերակը միայն ձերն է, այլ ոչ թե ուրիշինը: Եթե որեւէ մեկը ձեզ երջանիկ չի համարում, դրանից ձեր երջանկությունը չի պակասում:*

❑ *Փորձեք մարդկանց չկառչել, այդ ժամանակ պարզ կլինի, դուք նրանց իսկապե՞ս պետք եք, թե՞ ոչ:*

❑ *Եթե միաժամանակ սիրում եք երկուսին, ընտրեք երրորդին, քանի որ, եթե իսկապես սիրեիք առաջինին, ապա երկրորդը չէր հայտնվի:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՑ ԻՐ ՎՐԱՑ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

*Հունիսի 27-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, երկրի կառավարության հերթական նիստում, արտահանման ուղիների բնականոն գործունեության հարցում պայմանավորվածությունները ճշգրիտ կյանքի կոչելու համար, շնորհակալություն է հայտնել Վրաստանի եւ Ռուսաստանի Դաշնության իր գործընկերներին:*

- Մեր առեւտրատնտեսական հիմնական գործընկերը շարունակում է մնալ, ինչպես եւ պետք էր կռահել, Եվրասիական տնտեսական միությունը, Ռուսաստանի Դաշնությունը, հաջորդ տեղում արդեն Եվրոպական միության երկրներն են: Ես այս համատեքստում ուզում եմ արձանագրել, որ արտահանման ուղիների բնականոն գործունեության թեման մշտապես եղել է Հայաստանի եւ Ռուսաստանի, Հայաստանի ու Վրաստանի բարձրագույն պաշտոնյաների քննարկման օրակարգում: Ես այս հարցը քննարկել եմ ՌԴ նախագահի Վլադիմիր Պուտինի հետ, եւ ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հետ, վերջին այցի ընթացքում մենք այս առումով կոնկրետ պայմանավորվածություններ ենք ձեռք բերել, եւ նաեւ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի հետ բազմիցս քննարկումներ ենք ունեցել այս թեմայով: Եվ ես ուզում եմ շնորհակալություն հայտնել Ռուսաստանի Դաշնության եւ Վրաստանի մեր գործընկերներին` այս հարցում մեր պայմանավորվածությունները ճշգրիտ կյանքի կոչելու համար,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

# ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Հունիսի 26-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի հետ:*



Հանդիպմանը առանձնակի ընդգծվեց Հայաստան-Եվրամիության տարբեր ոլորտներում համագործակցության կարեւորությունը եւ այս համատեքստում անդրադարձան ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրին, ինչը, վարչապետի համոզմամբ, նշանակալի ազդակ է հետեւողական ժողովրդավարության զարգացման, դատաիրավական համակարգի արմատական բարեփոխման, մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ շարունակական քայլերի, ծրագրերի իրականացման գործում:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին, մտքեր փոխանակեցին նաեւ տարածաշրջանային հարցերի եւ զարգացումների շուրջ:

# ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՅՈԹՆԱՊԱՏԿՎԵԼ ԵՆ

*Հայաստանի կառավարության կողմից Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ավելացրած արժեքի հարկի վճարումը երեք տարով հետաձգելու եւ մաքսատուրքից ազատման արտոնություններ տրամադրելու շնորհիվ` Հայաստանում, նախորդ տարվա համեմատ, ներդրումներն աճել են 7, իսկ աշխատատեղերը` 4 անգամ:*

Հունիսի 27-ի կառավարության նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ անցած տարի առաջին հինգ ամիսներին այս գործիքակազմով կառավարությունը հաստատել է 11 ծրագիր` 35.3 մլն դոլար ներդրման խոստումով կամ ներդրումով եւ 502 աշխատատեղով: «Այս տարի հունվարմայիս ամիսներին ունենք 25 ներդրումային ծրագիր` 254 մլն դոլարի ներդրման խոստումով կամ պայմանով եւ 2379 աշխատատեղով: Ներդրումների մասով այս տարի առաջին հինգ ամիսներին, նախորդ տարվա հինգ ամիսների համեմատ, ունենք 7 անգամ աճ, աշխատատեղերի մասով ունենք չորս անգամ աճ: Սրանք այն թվերն են, որոնք կոնկրետ որոշակի պատկեր են արտահայտում»,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ իրենք, արտոնությունները տրամադրելուց հետո, պարտավորությունները չկատարելու եւ չարամտության ոչ մի դեպք չեն արձանագրել:

# ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

*Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց նվազագույն աշխատավարձը 55 հազար դրամից 68 հազար դրամ դարձնելու նախագծին:*

Հունիսի 27-ի կառավարության նիստի ընթացքում` «Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի քննարկմանը նշվեց, որ ներկայացվել է առաջարկ` նվազագույն աշխատավարձը 55 հազարից բարձրացնել եւ դարձնել 63 հազար դրամ: Հիմնավորումը Վիճակագրական կոմիտեի կողմից 2018 թվականի առաջին եռամսյակից հրապարակված միջին ընթացիկ գներով նվազագույն սպառողական արժեքի հիմքով է, որը 63 հազար 550 դրամ է:

Ներկայացված պարզաբանմամբ նշվեց, որ 45 հազար մարդ` մասնավոր ոլորտում եւ 35 հազար մարդ` պետական ոլորտում ստանում է նվազագույն աշխատավարձ` 55 հազար դրամ, կառավարությունն առաջարկում է, որ նվազագույն աշխատավարձը դառնա 68 հազար դրամ` բարձրանալով 23.6 տոկոսով:

# «ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ» ՍԵՄԻՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հունիսի 17-21-ը, Երեւանում անցկացված «Հիշողության պատկերներ. ձեռագիր եւ տպագիր ժառանգության պահպանման եւ վերականգնման նորագույն տեխնոլոգիաներ» խորագրով սեմինարի շրջանակում, Հայաստանը հյուրընկալել էր 11 երկրից ժամանած մասնագետների` վերականգնողների, ֆոնդապահների, թանգարանների, արխիվների, գրադարանների աշխատակիցների, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների:*

Մասնակիցների համար սեմինարը փորձի փոխանակման, նոր հմտությունների եւ կարողությունների ձեռքբերման ու կիրառման հրաշալի հարթակ է հանդիսացել:

Սեմինարն անցկացվել է Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի, Հայաստանի ազգային արխիվի եւ Հայաստանի ազգային պատկերասրահի աջակցությամբ:

# ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՊ` ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ



*Հայաստանի էկոնոմիկայի նախարարության եւ Լարսի անցակետի միջեւ հաստատված է օպերատիվ կապի օղակ, ուստի, տնտեսավարողների հետ առաջացող խնդիրների մասին նախարարությունում տեղեկանում եւ արձագանքում են շատ արագ:*

Ինչպես նշեցին գերատեսչությունում, օպերատիվ կապը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում կարգավորել անցակետում ծագող հիմնախնդիրները: Թեպետ, ինչպես նշեցին նախարարությունում, դա միայն հայկական կողմի խնդիրը չէ: Դա այդ լոգիստիկ հանգույցն օգտագործող երկրների տնտեսավարող սուբյեկտների խնդիրն է: «Մենք ակտիվ աշխատում ենք Վրաստանի մեր գործընկերների հետ, որ տանք երկարաժամկետ եւ համապարփակ լուծում: Տարբեր տարբերակներ ենք քննարկում` սկսած ենթակառուցվածքների բարելավումից, վերջացրած այլ լուծումներով»,- նշեցին նախարարությունում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

*Աշխատանքային այցով Շվեյցարիայի Համադաշնությունում գտնվող Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը Ժնեւում հանդիպել է «Համաշխարհային առաջնորդության հիմնադրամ»-ի (Global Leadership Foundation) պատվիրակությանը` ի դեմս Շվեյցարիայի նախկին նախագահ Միշելին Կալմի-Ռեյի, 1989-92թթ. ՄԱԿ-ում Միացյալ Նահանգների մշտական ներկայացուցիչ Թոմաս Փիքերինգի, 2011-17թթ. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի` խաղաղապահ առաքելությունների հարցով տեղակալ Հերվե Լադսուսի, ինչպես նաեւ հիմնադրամի նախագծերի տնօրեն Ամիթավ Բաներջիի:*

*Հանդիպմանը կողմերը քննարկեցին տարբեր ոլորտներում խորհրդատվական աջակցության ցուցաբերման հնարավորությունները:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՎԵՑ

*Հայաստանի Ազգային ժողովը վավերացրեց Հայաստանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» կիրարկմանն օժանդակելու համագործակցության մասին» համաձայնագիրը: Նշենք, որ Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ վերոնշյալ համաձայնագիրը ստորագրվել է 2018թ. փետրվարի 12-ին, Երեւանում:*

*Համաձայնագիրը վավերացվեց միաձայն` 83 կողմ ձայնով:*

## ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎԵՑԻՆ

*Հունիսի 25-ին, Հայաստանի ազգային ժողովը` երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ, ընդունեց Հարկային օրենսգրքի փոփոխությունների փաթեթը:*

*Նախագծերի փաթեթին կողմ քվեարկեց 73, դեմ` 32 պատգամավոր:*

*Փաթեթով առաջարկվող հիմնական փոփոխություններից է եկամտային հարկի համահարթեցումը: Եկամտային հարկը կդառնա 23 տոկոս, ապա աստիճանաբար նվազելով կհասնի 20 տոկոսի: Նախագծով բարձրացվում է նաեւ վարկային կազմակերպությունների, գրավատների, փոխանակման կետերի պետական տուրքը:*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃՈՒՄ Է

*Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով, տնտեսական ակտիվության ցուցանիշը այս տարվա մայիսին, նախորդ տարվա մայիսի համեմատ, աճել է 7.3 տոկոսով:*

*Մասնավորապես, 2019-ի մայիսին, 2018-ի մայիսի համեմատ, արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 10.2 տոկոսով, շինարարության ծավալը` 2 տոկոսով, առեւտրի շրջանառությունը` 4.9 տոկոսով, իսկ ծառայությունների ծավալը` 14.8 տոկոսով: Միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանում այս տարվա մայիսին աճել է 6.5 տոկոսով: Ընդ որում, պետական օղակում` 6.9 տոկոսով, իսկ ոչ պետականում` 4.7 տոկոսով:*

## ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ, ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ` ՆՎԱԶԵԼ

*Հայաստանի Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում, 2019 թվականի առաջին հինգ ամիսներին, գրանցվել է 6 հազար 97 ամուսնություն, ինչը, 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, ավելի է 521-ով, իսկ ամուսնալուծությունների թիվը նվազել է 151-ով: 2019 թվականի առաջին հինգ ամիսներին գրանցվել է 1506 ամուսնալուծություն:*

ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼ

# «ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ» ՄՈՆՈԴՐԱՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԾ «ՀԱՅԱՐՏԱՆԸ»



*Թբիլիսիի «Հայարտուն» կենտրոնում, Վրաստանում ՀՀ դեսպանության հրավերով, Հայաստանի Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը հանդիսատեսին ներկայացրեց Անտոն Չեխովի «Կարապի երգը» պիեսի մոնոդրաման: Ներկայացման գլխավոր եւ միակ դերակատարը Արամ Հայրապետյանն էր:*

...Ժեստը, դիմախաղը, ձայներանգը հույզերին ներդաշնակելու արվեստին տիրապետող Արամ Հայրապետյանին հավատաց նաեւ այդ օրվա հանդիսատեսը: Հավատաց ու վերապրեց նրա հերոսի տագնապները:

Բեմադրիչ Արթուր Գաբրիելյանի, դերասան Արամ Հայրապետյանի, նկարչական եւ երաժշտական ձեւավորումների հեղինակ Գրիշա Մարգարյանի ստեղծագործական նրբանկատ համադրությամբ` մոնոդրամայում հնչեցին նաեւ Շեքսպիրի «Լիր Արքայի», Սունդուկյանի «Խաթաբալայի»,Պարոնյանի «Պաղտասար աղբար», Շիրվանզադեի «Չար ոգու» հերոսների` տվյալ մոնոներկայացման արծարծումներին համահունչ մենախոսությունները:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ՍՊՈՐՏ

# ԱԿՏԻՎՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ

## ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻ ՕԹԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆԸ` ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 21-ին, Մինսկում մեկնարկեցին եւ մինչեւ հունիսի 30-ը կշարունակվեն Եվրոպական երկրորդ խաղերը: Մրցաշարին մասնակից 50-ից ավելի երկրների շուրջ 4000 մասնակիցների թվում են նաեւ Վրաստանի եւ Հայաստանի ներկայացուցիչները:*

Մրցումների մեկնարկից մեկ շաբաթ անց` Վրաստանի թիմը, ընդհանուր առմամբ, 24 (6 ոսկե, 7 արծաթե, 11 բրոնզե) մեդալներով թիմային հաշվարկում հինգերորդն է, առաջ անցնելով մարզականի այնպիսի տիրություններից, ինչպիսիք են Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան...

Խաղերին Վրաստանը ներկայացնող Ախալքալաքիի Կարտիկամ գյուղից բռնցքամարտիկ, Եվրոպայի 2015 թվականի արծաթե, 2017 թվականի աշխարհի բրոնզե մեդալակիր, վաստակավոր մարզիչ Ատոմ Էլիզբարյանի սան Օթար Երանոսյանը արժանացավ բրոնզե մեդալի (60կգ քաշային կարգ): Նույն մարզադպրոցի մեկ այլ սան` Արտյուշ Գոմցյանը, 56 կգ քաշային կարգում հաղթելով երկու մրցամարտերում, հաջորդ փուլում, ցավոք, պարտվեց եւ դուրս մնաց մրցաշարից:

Հայաստանի հավաքականը իր ակտիվում ունի երեք տարբեր արժողության մեկական մեդալ: Այն թիմային հաշվարկում 28-րդն է:





Թիմային ոչ պաշտոնական աղյուսակը 72 (32, 16, 24) մեդալով, գլխավորում է Ռուսաստանի թիմը, երկրորդը` 55 (19,13,23) մեդալով, տանտերերն են, իսկ երրորդը` 21 (9,7,5) մեդալով, Իտալիայի թիմն է:

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ

# ՄԵԿԴԱՐՅԱ ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ԿՅԱՆՔ



101 տարեկանում երկրային կյանքին հրաժեշտ տվեց թբիլիսաբնակ գրողմանկավարժ, ՎՀԳ-ի «Վերնատուն» միության անդամ, Հայրենական մեծ պատերազմի վետերան Խաժակ Եփրիկյանը:

...Այսօր, երբ թբիլիսահայ մտավորականությունը` գործընկերները, գրչակիցներն ու բարեկամները դեպի հավերժություն են ճանապարհում ավագ սերնդի երեւելի ներկայացուցչին, հիշելով նրա հետ անցկացրած օրերը, աներկբա համոզմունքով վկայում են, որ Խաժակ Եփրիկյանի ինքնության ճշգրիտ արտահայտությունն է կյանքի հավատով լի նրա ստեղծագործական աշխարհը:

Շուրջ վեց տասնամյակ նա` որպես մանկավարժ, մեր գրականության գանձերը փոխանցեց մատաղ սերնդին` սեր սերմանելով նրանում դեպի մայրենին ու նրա հարուստ մշակույթը: Այդ վսե'մ մղումով նա ստանձնեց Թբիլիսիի թիվ 86 դպրոցի ուսմասվարի պատասխանատու գործը, դարձավ ՎՀԳ-ի «Վերնատուն» միության անդամն ու նրա «Գրական ծիլեր» ակումբի` պատանի ստեղծագործողին ուղղորդող ղեկավարը: Եղավ վիրահայ գրականությունը ներկայացնող բազմամյա «Կամուրջ» ու «Վերնատուն» տարեգրքերի պահանջված հեղինակն ու սիրելի «Վրաստան» թերթի ազնվագույն բարեկամը, որից չբաժանվեց մինչեւ վերջին շունչը:

Իր դարի մանր ու մեծ արհավիրքները նա ապրեց ոչ միայն ազնիվ քաղաքացու արժանավայել առօրյայով, այլ նաեւ իր ստեղծագործությամբ:

Խաժակ Եփրիկյանի «Հայրենիքիս առավոտը», «Կոմիտասի չինարին», «Պատմվածքներ» ժողովածուներում ամփոփված պատմվածքներն ու բանաստեղծությունները, առինքնում են իրենց բարձր ու լայնախոհ արծարծումներով:

Այդպես` բարձր ու լայնախոհ անցավ իր կյանքի երկար ու իմաստալից արահետը նաեւ ինքը` Խաժակ Եփրիկյան մանկավարժ-գրողը, եւ այդ բարձունքից էլ բանաձեւվեց նրա արժանավայել հրաժեշտը աշխարհին.

«Հիմա իմ խիղճը հանգիստ է. Կյանքին հրաժեշտ էլ տամ` ցավ չէ... Ես աշխարհին պարտք չունեմ: Բայց աշխարհն ինձ պարտք մնաց...»:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

«Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, «Վրաստան» թերթի աշխատակազմը խորապես վշտացած են մեր բարեկամ

*ԽԱԺԱԿ ԵՓՐԻԿՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի ընտանիքին եւ հարազատներին:

# ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ֆուտբոլի իսպանական առաջատար ակումբ: 5.Ստամբուլը հայերի մոտ: 8.Գյումրեցիների եկեղեցին: 10.Չրլող, գեղեցիկ թռչուն: 12.Քաջ, կտրիճ: 13.Հրաբխի ժայթքածը: 14.Շատ նման, կրկնօրինակ: 16.Հայկական հայտնի գինի: 18.Գետ Սիբիրում: 19.Արեւմտահայ բանաստեղծ Սիամանթոյի իսկական անունը: 20.«... երկու տառ, ... հասարակ մի դերանուն» (Պ.Սեւակ): 21.Հայկական հին գավառ: 22.Երկրաչափական մարմին: 25.Վերջածանց: 26.Այրող, վառող: 27.Զինվորականի աստիճան: 30.Հայկական կարմիրը: 31.Հ.Շիրազի բանաստեղծություններից: 33.Գ.Զոհրապի նովելներից: 36.Ոչ նոր, օգտագործված, մաշված: 37.Արեգակնային համակարգի մոլորակ: 39.Արգոնավորդների ղեկավարը: 41.Հարցական դերանուն: 42.Վերք, վնասվածք (բրբ.): 44.Պեպոյի «գործիքը»: 45.Հովհ.Թումանյանի հերոսներից: 47.Ֆիլիպինների մայրաքաղաքը: 50.Ալանների երկիրը: 52.Լավ կամ վատ տեղեկություն: 53.Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր: 54.Մոնթե Մելքոնյանի կեղծանունը: 56.Մեսրոպյան այբուբենի զինվոր: 57.Մխիթարյան միաբանության կղզին` Սուրբ ...: 58.Հայկական միրգ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մխիթար Սպարապետի զինակիցներից: 2.Անկողնային պարագա: 3.Կոմիտասի երգերից: 4.Ասիական պետության մայրաքաղաք: 5.Վիզ, ճիտ: 6.Դերասանուհի Անի ...: 7.Քաղաք Թուրքիայում: 9.Անուրջ, ցնորք: 11.Բարի լուր: 13.... Սկալա, ... Պլատա: 15.Ներքին օրգան: 17....ուն, ...ակ: 18.«Սիրում եմ ես մեր երկիրը, ...ը, ջուրը եւ արեւը»: 21.«Կապիտալի» հեղինակ ... Մարքս: 23.Ճիճու, զեռուն, ուտիճ: 24.«Անուշը կանգնած` Սարոն ...» (Հովհ.Թումանյան): 26.Թունավոր օձ: 28.Ակնթարթ, կարճ տեւողություն: 29.Ա.Բակունցի երկերից «... աղջիկ»: 32.Կրկեսի հայ աստղ: 34.Հին պետություն: 35.Պետություն Եվրոպայում: 38.Ջ.Վերդիի օպերաներից: 39.Չինաստանի դրամական միավորը: 40.Իսպանացի թենիսիստ Ռաֆայել ...: 43.Խոհանոցային սպասք: 46.Թիֆլիսում լույս ընծայված հայկական թերթ: 48.Ժխտական նախածանց: 49.Ոչ պարարտ, լղար: 51.Խոտակեր կենդանի: 52.Ալարկոտ, ոչ գործունյա: 54.Ընտանի կենդանի: 55.Օժանդակ բայ:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Օսլո: 8.Ականատես: 10.Խանութ: 11.Ազնի: 12.Պանով: 15.Մարիա: 17.Պրակ: 20.Յաման: 23.Արական: 26.Տնանկ: 27.Ծերանոց: 28.Միր: 29.Հալավ: 32.Ագա: 34.Ես: 36.Մարի: 38.Սնում: 39.Գազաթ: 42.Միտք: 44.Զանազան: 46.Ավարա: 49.Տհաճ: 52.Տեգր: 53.Կառ: 54.Արաղ: 55.Դիանա: 56.Ջմեռ: 57.Պանի: 58.Տակ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բոխի: 2.Վան: 3.Լաթ: 4.Զագա: 5.Լելո: 7.Սագարած: 9.Կույր: 12.Պայտ: 13.Նումա: 14.Վանկ: 16.Ալանի: 18.Արենա: 19.Կար: 21.Անհամ: 22.Անջար: 24.Կամք: 25.Նորեն: 30.Լալի: 31.Վիրք: 33.Գրազ: 35.Սույն: 37.Խան: 40.Գանա: 41.Թառ: 42.Մով: 43.Տիրանա: 45.Աբեղա: 46.Արդի: 47.Ակատ: 48.Առակ: 50.Հում: 51.Ճառ: 52.Տապ:

Խմբագիր` ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն` Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445